

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՋ

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՀՀ Սահմանադրության փոփոխություններով վերանայվեցին ՀՀ արդարադատության խորհրդի կառուցվածքը, սահմանադրական կարգավիճակի առանձին տարրերը: Այսպես, մինչև սահմանադրական բարեփոխումները ՀՀ գլխավոր դատախազը և ՀՀ արդարադատության նախարարը (գործադիր իշխանության ներկայացուցիչը) ՀՀ արդարադատության խորհրդի փոխնախագահներն էին, ինչը իրավաչափ չէր: ՀՀ Նախագահի կողմից ՀՀ արդարադատության խորհուրդը գլխավորելը նույնպես իրավաչափ չէր, քանի որ նա, սահմանադրական իր բազմաթիվ լիազորություններին համապատասխան, այն ժամանակ, փաստորեն, գործադիր իշխանության ղեկավարն էր, որը իր ղեկավարած ՀՀ արդարադատության խորհրդի առաջադրմամբ նշանակում էր բոլոր ատյանների դատավորներին (ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 11-րդ կետ): Փաստորեն, դատական իշխանությունն ամբողջությամբ կենտրոնացած էր նրա ձեռքում, ինչը չէր կարող նպաստել զսպումների և հակակշիռների սկզբունքի իրացմանը¹ և դատական համակարգի անկախացմանը: Ներկայումս ՀՀ Սահմանադրության 94.1 հոդվածի համաձայն՝ ՀՀ արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում են ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով օրենքով սահմանված կարգով ընտրված ինը դատավորներ, ՀՀ Նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան գիտնականներ: ՀՀ արդարադատության խորհրդի նիստերը վարում է ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը՝ առանց քվեարկության իրավունքի:

ՀՀ Սահմանադրության 95 հոդվածում ներկայացված են ՀՀ արդարադատության խորհրդի գործառնությունները (լիազորությունները): ՀՀ արդարադատության խորհրդի սահմանադրական գործառնություններից է դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծումը:

Սույն աշխատանքում կքննարկենք հասարակական-քաղաքական համակարգում ՀՀ արդարադատության խորհրդի դերակատարության, ՀՀ արդարադատության խորհրդի քաղաքականությունն արտահայտող ակտերի բնույթի և դրանց վերանայման հնարավորության, ՀՀ արդարադատության խորհրդի և ՀՀ վճռաբեկ դատարանի ակտերի փոխազդեցության հարցերը:

ՀՀ արդարադատության խորհրդի դերակատարությունը հասարակական-քաղաքական համակարգում: Հասարակական-քաղաքական համա-

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ», ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր., 2010, էջ 934:

կարգում ՀՀ արդարադատության խորհրդի դերակատարության հարցը տեսության մեջ առանձին քննարկման առարկա չի հանդիսացել. տեսաբանները, որպես կանոն, սահմանափակվում են ՀՀ արդարադատության խորհրդի սահմանադրական գործառույթները ներկայացնելով² կամ պարզապես խոսում են դատական համակարգի կազմավորման ոլորտում ՀՀ արդարադատության խորհրդի ունեցած նշանակության մասին³:

ՀՀ արդարադատության խորհուրդն ինչպիսի՞ դերակատարություն ունի կամ պետք է ունենա իրավական քաղաքականության իրականացման, դատական մարմինների գործունեության ուղղությունների ձևավորման ոլորտում, ՀՀ արդարադատության խորհրդի ակտերը ի՞նչ արժեքային նշանակություն և հեղինակություն ունեն, արդյո՞ք հասարակական հարաբերության մասնակիցները, դատարանները, դատական գործերով իրենց դիրքորոշումները ներկայացնելիս կամ դատական ակտերը հիմնավորելիս վկայակոչում են խորհրդի որոշումները⁴: Նշված հարցադրումներին պատասխանելու, հետևապես՝ հասարակական-քաղաքական համակարգում ՀՀ արդարադատության խորհրդի դերակատարությունը գնահատելու համար պետք է կիրառել ոչ միայն քննարկվող մարմնի իրավական կարգավիճակի զուտ դոգմատիկ իրավական, այլև սոցիոլոգիական վերլուծություն:

Կանխավ նշենք, որ անցկացված հարցման արդյունքում պարզվել է, որ ՀՀ արդարադատության խորհուրդն իրավաբանական հանրության շրջանակներում հիմնականում ընկալվում է որպես դատավորներին պատժող մարմին: Այսպես, հարցման ենթարկված իրավաբանների 96 տոկոսը նշել է, որ ՀՀ արդարադատության խորհուրդը առավելապես ընկալվում է որպես պատժող մարմին: Նմանատիպ եզրահանգումներ են արված նաև Ամերիկյան իրավաբանների ընկերակցության՝ 2008 թ. դատական բարեփոխումների ինդեքսում: «Հայաստանում դատաիրավական ոլորտի բարեփոխումների (2012-2014 թթ.) նախագծումը» ծրագրի փորձագետների պատրաստած վերլուծության նախնական տարբերակում նշվում էր, որ ՀՀ արդարադատության խորհրդի գործունեությունը հանրության մի զգալի մասի կողմից համարվում է անարդյունավետ: ՀՀ արդարադատության խորհրդի գործունեությունը չի համապատասխանում դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներ իրականացնող անկախ մարմնի դերին և կարգավիճակին:

Ինչո՞վ է պայմանավորված հասարակական-քաղաքական համակարգում ՀՀ արդարադատության խորհրդի դերակատարության նման ընկալումը: Նախ, պետք է փաստել, որ ի տարբերություն մյուս բարձր դատարաններ-

² Տե՛ս **Գ. Բաղիրյան**, Դատաիրավական բարեփոխումները և Հայաստանի Հանրապետության նոր դատական համակարգը, Եր., 2002, էջ 128-137:

³ Տե՛ս **Ս. Դիլբանդյան, Ա. Հարությունյան, Գ. Ղազինյան, Յ. Ղուկասյան**, Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավապահական մարմինները, Եր., 2007, էջ 220, **Յ. Մանուկյան**, Արդարադատության խորհուրդը դատական նոր համակարգի պայմաններում, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 22.02. 1998:

⁴ Սույն աշխատանքում ՀՀ արդարադատության խորհրդի դիրքորոշումների հնարավոր ազդեցությունը հասարակական-քաղաքական կյանքի վրա կդիտարկվի բացառապես դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթի սահմաններում:

րի (ՀՀ սահմանադրական դատարան, ՀՀ վճռաբեկ դատարան) իրավական կարգավիճակի, ՀՀ արդարադատության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակի առանձին տարրեր ամբողջական կարգավորում չեն ստացել: Այսպես, ՀՀ Սահմանադրությամբ և ընթացիկ օրենսդրությամբ պարզապես ներկայացվում են ՀՀ արդարադատության խորհրդի սահմանադրական լիազորությունները, կառուցվածքը և այլ ընթացակարգային հարցեր, սակայն օրենսդրությամբ ներկայացված չէ այդ մարմնի սահմանադրական հիմնական առաքելությունը: Մինչդեռ ՀՀ Սահմանադրությամբ և ընթացիկ օրենսդրությամբ ամրագրված է ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական հիմնական գործառույթը, այն է՝ սահմանադրական արդարադատության և օրենքի միատեսակ կիրառության ապահովում:

Երկրորդ, օրենսդրությամբ ամրագրված է ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի ակտերի նորմատիվ բնույթը («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61 հոդվածի 5-րդ մաս, ՀՀ դատական օրենսգրքի 15 հոդվածի 4-րդ մաս), մինչդեռ ՀՀ դատական օրենսգրքում խոսք չկա ոչ միայն ՀՀ արդարադատության խորհրդի որոշումների նորմատիվության, այլև այդ որոշումների պարտադիրության կամ իրավաբանական բնույթի վերաբերյալ:

Բացի այդ, դատական ներհամակարգային հարաբերությունների շրջանակներում ՀՀ արդարադատության խորհրդի դերակատարությունը օբյեկտիվորեն սահմանափակված է դատավորների կողմից վարքագծի կանոնները պահպանելու կամ չպահպանելու փաստը հավաստելու, նյութական կամ դատավարական իրավունքի էական կամ կոպիտ խախտման առկայությունը փաստելու շրջանակով:

ՀՀ արդարադատության խորհրդի դերակատարության թերի ընկալման պատճառներից է նաև նրա գործունեության ոչ հրապարակային բնույթը: Թեև ՀՀ արդարադատության խորհրդի որոշումները պաշտոնապես հրապարակվում են, սակայն իրավաբանական հանրությունն, ընդհանուր առմամբ, տեղյակ չէ ՀՀ արդարադատության խորհրդի նիստերի օրերի, ժամերի, օրակարգի, ինչպես նաև գործունեության առանձնահատկությունների մասին: Այսպես, Հայաստանում դատական բարեփոխումների 2004 թ. ինդեքսում նշվում է, որ հարցման մասնակիցների մեծ մասը տեղյակ չէր դատավորների հանդեպ կարգապահական տույժերի կիրառման կոնկրետ փաստերի մասին, ինչը մասամբ բացատրվում է նրանով, որ ՀՀ արդարադատության խորհրդի գործունեությունը հրապարակային բնույթ չի կրում՝ բացառությամբ որևէ դատավորի լիազորությունների դադարեցման դեպքերի, որոնք լուսաբանվում են լրատվության միջոցներով⁵: ՀՀ արդարադատության խորհրդի աշխատակազմի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ՝ ՀՀ արդարադատության խորհրդի նիստերի օրը, ժամը, վայրը, օրակարգը որևէ ինտերնետային կայքում նախապես չի տեղադրվում:

ՀՀ արդարադատության խորհրդի գործունեության ոչ բավարար թափանցիկությունը պայմանավորված է նաև օրենսդրական կարգավոր-

⁵ Տե՛ս «Դատական բարեփոխումների ինդեքս Հայաստանի Հանրապետության համար», հ. 2, Եր., 2004, էջ 58:

մամբ: Այսպես, ՀՀ դատական օրենսգրքի 109 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ արդարադատության խորհրդի նիստերը դմնփակ են, բացառությամբ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործերի քննության այն դեպքերի, երբ դատավորը, որի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել, պահանջում է իր գործի հրապարակային քննություն: Իրավական տեղեկատվական ռեսուրսների (www.court.am, www.arils.am) ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2007-2011 թ. առաջին եռամսյակում ընկած ժամանակահատվածում դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերի քննությունը հրապարակային է անցկացվել միայն մեկ գործով (Պ. Օհանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործով):

Կարծում ենք, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու քննության հրապարակայնությունը էապես ընկալելի կդարձնի ոչ միայն ՀՀ արդարադատության խորհրդի դերակատարությունը, այլև կբարձրացնի դատավորների պատասխանատվությունը: ՀՀ արդարադատության խորհրդի դմնփակ նիստերի անցկացումը կարող է արդարացված լինել այն դեպքերում, երբ քննարկվում են դատավորի վարքագծի այնպիսի կանոնների խախտումներ, որոնք առնչվում են դատավորի մասնագիտական հեղինակությանը, մասնավոր կյանքին, կամ ուսումնասիրվում են դատավարական և նյութական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք առնչվում են օրենքով պաշտպանվող գաղտնիքին: Ընդհանուր կանոն պետք է լինի կարգապահական պատասխանատվության հարցի քննարկումը դմնբաց նիստում, եթե դատավորը չի պահանջում հարցը քննարկել դմնփակ նիստում:

ՀՀ արդարադատության խորհրդի քաղաքականությունն արտահայտող ակտերի բնույթը: Ինչպես նշվեց, ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ ՀՀ արդարադատության խորհրդի ակտերի իրավաբանական բնույթի, առավել ևս դրանց նորմատիվության վերաբերյալ որևէ դրույթ⁶: ՀՀ արդարադատության խորհրդի իրավական դիրքորոշումների՝ այլ դատարանների համար ոչ ձևական իմաստով պարտադիրությունը երաշխավորված է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորությամբ: Եթե ՀՀ արդարադատության խորհուրդը որևէ դատավորի ենթարկել է կարգապահական պատասխանատվության և այդ համատեքստում տվել նյութական և դատավարական իրավունքի, դատավորի վարքագծի կանոնների մեկնաբանություն, այսինքն՝ արտահայտել է իրավական դիրքորոշում, ապա այլ դատավորների համար այդ մեկնաբանության հիման վրա գործունեություն իրականացնելը պարտադրված է կարգապահական պատասխանատվության ենթարկվելու սպառնալիքով:

Իրականացված հարցումների արդյունքում պարզվել է, որ ՀՀ-ում իրավաբանական հանրության շրջանակներում ՀՀ արդարադատության խորհրդի որոշումները չեն վայելում բավարար հեղինակություն, կոնկրետ դատական գործերով իրավաբանները իրենց դիրքորոշումները ներկա-

⁶ Այս մասին մանրամասն տես **Ա. Ղամբարյան**, Դատական քաղաքականության մեթոդաբանական հիմնախնդիրները, Եր., 2011, 208 էջ:

յացնելիս, իսկ դատարանները դատական ակտերը հիմնավորելիս չեն վկայակոչում ՀՀ արդարադատության խորհրդի որոշումները⁷: Այսպես, հարցման ենթարկված անձանցից և ոչ մեկի կողմից չի նշվել գոնե մի դեպք, երբ իրենց գործունեության ընթացքում կոնկրետ գործով հղում կատարեն ՀՀ արդարադատության խորհրդի որոշումներին: Մինչդեռ ՀՀ արդարադատության խորհրդի որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում երբեմն ներկայացվում են իրավական զարգացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցող դիրքորոշումներ: Այսպես, ՀՀ արդարադատության խորհուրդը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Պ. Օհանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին 12.10.2007 թ. որոշման 4-րդ կետում իրավական դիրքորոշում է հայտնել «դատական որոշման անհստակությունը լուծելու մասին» դատավարական փաստաթղթի իրավաբանական բնույթի վերաբերյալ:

«Ի նկատի ունենալով, որ «Դատական որոշման անհստակությունը լուծելու մասին» որոշումն ըստ էության համարվում է դատավճռի մաս՝ դժվար չէ ենթադրել, որ այն համարվում է գործն ըստ էության լուծող վերջնական որոշում, որը ենթակա է բողոքարկման: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վերջնական որոշումն օրինական ուժի մեջ է մտնում վերաքննության կարգով բողոքարկման ժամկետն անցնելուց հետո, եթե այն բողոքարկված չի եղել»:

Փաստորեն, ՀՀ արդարադատության խորհուրդը նշված գործով հաստատել է «դատական որոշման անհստակությունը լուծելու մասին» որոշման գոյության իրավաչափությունը և այն որակել որպես դատավճռի մաս: Նման դիրքորոշումից բխում է, որ այդ որոշումը բոլոր դեպքերում ենթակա է բողոքարկման: Ի դեպ, ՀՀ արդարադատության խորհրդի նշված որոշումից հետո ՀՀ քր. դատ. օր.-ը 18.12.2007 թ. լրացվեց 376.1 հոդվածով, որտեղ սահմանվեց վերաքննության կարգով բողոքարկման ենթակա որոշումների ցանկը, որոնց կազմում «դատական որոշման անհստակությունը լուծելու մասին» որոշումը բացակայում է: Սակայն, ղեկավարվելով ՀՀ արդարադատության խորհրդի նշված իրավական դիրքորոշմամբ, քրեական դատավարության մասնակիցները կարող են այն բողոքարկել վերաքննիչ դատարան որպես դատավճռի մաս:

Մեկ այլ օրինակ. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Պողոսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործով ՀՀ արդարադատության խորհուրդը, 22.12.2010 թ. որոշմամբ մեկնաբանելով ՀՀ քր. դատ. օր.-ի 283 հոդվածի 4-րդ մասը, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

⁷ Բացառություն են կազմում առանձին գիտական հոդվածներ, որտեղ վերլուծվում են թեմայի վերաբերյալ ՀՀ արդարադատության խորհրդի իրավական դիրքորոշումները, տես (օրինակ, **Ս. Մարաբյան**, Դատարանի կողմից ex officio հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման մասին որոշում կայացնելու որոշ հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում, «Պետություն և իրավունք», թիվ 1(51), 2011, էջ 13-21):

«ՀՀ քր. դատ. օր.-ի 283-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված՝ համապատասխան միջնորդությունն անհապաղ քննելու պահանջը **վերաբերում է միջնորդության քննությունը սկսելուն և ոչ թե ավարտելուն**: Հակառակ մոտեցման պարագայում դատարանի վրա կդրվեր առանց բավարար հիմնավորումների որոշում կայացնելու պարտականություն, որի հետևանքով անձի ազատության և անձեռնմխելիության սահմանադրական արժեքի իրավական երաշխիքը՝ դատական վերահսկողությունը, կդառնար պատրանքային: Խորհրդի դիրքորոշմամբ ՀՀ քր. դատ. օր.-ի 285-րդ հոդվածի 4-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ միջնորդության լուծումը (որոշման կայացումը) կարող է տեղի ունենալ ոչ անհապաղ և ոչ նույն օրը, քանի որ միջնորդությունը հիմնավորող լրացուցիչ նյութերը, բացատրությունները պահանջելու դատավորի իրավունքը կարող է ենթադրել դատական նիստի հետաձգում»:

Կարծում ենք՝ նյութական և դատավարական իրավունքի կոպիտ և ակնհայտ խախտման փաստի քննության շրջանակներում ՀՀ արդարադատության խորհրդի արտահայտած իրավական դիրքորոշումները հետագայում կոնկրետ գործերով դատավարության մասնակիցները կարող են դնել իրենց փաստարկների, իսկ դատարանները՝ դատական ակտերի պատճառաբանության հիմքում:

Հաճախ ՀՀ արդարադատության խորհրդում քննարկվում են իրավական որոշակիությանն առնչվող հարցեր կամ օրենսդրական բացեր, որոնք պետք է օրենսդրական փոփոխություններ նախաձեռնելու առիթ դառնան: Այսպես, Գ. Պողոսյանի վերաբերյալ վերը նշված գործով դատավորը իր բացատրություններում արդարացիորեն ներկայացրել է ՀՀ քր. դատ. օր.-ի 258 հոդվածի կիրառման ոլորտի իրավական որոշակիության մի շարք հարցադրումներ և օրենսդրական բացեր: Իրավական նման անորոշության պայմաններում ՀՀ արդարադատության խորհուրդն արդարացիորեն մերժել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը, իսկ որոշման մեջ ողջունել է ՀՀ արդարադատության նախարարի՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 285 հոդվածի 1-ին մասում լրացումներ կատարելու օրենսդրական առաջարկությունները:

ՀՀ արդարադատության խորհրդի քաղաքականությունն արտացոլող ակտերը պետք է օժտված լինեն դոկտրինալ բնույթով: ՀՀ արդարադատության խորհրդի կազմում ընդգրկված են չորս իրավաբան գիտնականներ: Ինչո՞վ է պայմանավորված ՀՀ արդարադատության խորհրդում իրավաբան գիտնականների ներկայությունը: Հարցման ենթարկված անձանց 89 տոկոսը նշել է, որ նման մոտեցման նպատակն է բարձրացնել խորհրդի որոշումների դոկտրինալ բնույթը:

Կարծում ենք՝ ՀՀ արդարադատության խորհրդի կազմում իրավաբան գիտնականների ներկայությունը չի ապահովում ՀՀ արդարադատության խորհրդի որոշումների դոկտրինալ բնույթը, ինչը պայմանավորված է երկու հանգամանքով՝

1. ՀՀ արդարադատության խորհրդի որոշումների նախագծերի պատրաստման գործընթացում իրավաբան գիտնականների մասնակցության հստակ կառուցակարգերի բացակայությամբ,

2. ՀՀ արդարադատության խորհրդի անդամների, այդ թվում իրավաբան գիտնականների կողմից հատուկ կարծիք ներկայացնելու մեխանիզմի բացակայությամբ:

ՀՀ դատական օրենսգրքում ուղղակիորեն չի սահմանվում, թե ով է նախապատրաստում ՀՀ արդարադատության խորհրդի որոշումների նախագծերը: ՀՀ դատական օրենսգրքի 112 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ արդարադատության խորհրդի աշխատակազմի գործառույթներն իրականացնում է ՀՀ դատական դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանունը: ՀՀ դատական դեպարտամենտը նախապատրաստում է ՀՀ արդարադատության խորհրդի նիստերը, օրենսգրքով նախատեսված ժամկետներում ՀՀ արդարադատության խորհրդի անդամներին, գործին մասնակցող այլ անձանց, արդարադատության նախարարին է ուղարկում ՀՀ արդարադատության խորհրդում քննվող հարցերի վերաբերյալ նյութերը, արձանագրում է ՀՀ արդարադատության խորհրդի նիստերը, առաքում և հրապարակում է ՀՀ արդարադատության խորհրդի ընդունած ակտերը: Գործնականում ՀՀ արդարադատության խորհրդի որոշումների նախագծերը տրամադրվում են խորհրդի անդամներին, ովքեր կարող են ներկայացնել իրենց առաջարկությունները, որոնք ցավոք չունեն պարտադիր ուժ:

ՀՀ դատական օրենսգրքում նախատեսված չէ խորհրդի անդամների կողմից հատուկ կարծիք ներկայացնելու հնարավորություն: ՀՀ դատական օրենսգրքի 111 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ՀՀ արդարադատության խորհրդի որոշումները կայացվում են խորհրդակցական սեյնյակում և ստորագրվում որոշման կայացմանը մասնակցած բոլոր անդամների կողմից: Մինչդեռ, ՀՀ արդարադատության խորհրդի հատկապես իրավաբան գիտնականների հատուկ կարծիքը կարևոր նշանակություն կարող է ունենալ ՀՀ արդարադատության խորհրդի իրավական դիրքորոշումների բովանդակության հետագա զարգացման, փոփոխման, գիտականության ապահովման հարցում:

ՀՀ արդարադատության խորհրդի քաղաքականության ակտերի հաջորդ հատկանիշը դրանց հրապարակային բնույթն է: ՀՀ դատական օրենսգրքի 111 հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ՀՀ արդարադատության խորհրդի որոշումները ենթակա են հրապարակման «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» և դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում: Ինչպես նշվել է, դատական ակտերի հրապարակման պահանջը այդ ակտերի նորմատիվության կարևոր նախապայմաններից է: Սակայն պետք է նկատի ունենալ, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը թեև կարգավորում է մյուս բարձր դատարանների ակտերի հրապարակման վերաբերյալ դրույթները, սակայն չի կարգավորում ՀՀ արդարադատության խորհրդի ակտերի հրապարակման հարցերը: Ուստի անհրաժեշտ է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում վերացնել նշված բացը:

ՀՀ արդարադատության խորհրդի քաղաքականությունն արտահայտող ակտերի վերանայման հնարավորությունը: ՀՀ դատական օրենսգրքի

111 հողվածի 6-րդ մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ՀՀ արդարադատության խորհրդի որոշումները վերջնական են, ուժի մեջ են մտնում ՀՀ արդարադատության խորհրդի նիստում հրապարակելու պահից և բողոքարկման ենթակա չեն: ՀՀ արդարադատության խորհրդի որոշումների դատական բողոքարկման արգելքը քննադատության է արժանացել տարբեր մարմինների կողմից: Դեռևս 2006 թ. Ամերիկյան իրավաբանների միության կողմից ՀՀ դատական օրենսգրքի նախագծի փորձաքննության եզրակացության մեջ նշվել էր, որ դատավորի բողոքարկման իրավունքի բացակայությունը ոչ միայն անպատասխանատու է, այլև խախտում է արդարացի դատաքննության՝ արևմտյան ժողովրդավարություններին հայտնի սկզբունքները և կարող է լրջորեն սահմանափակել մարդու իրավունքները և արդարացի դատաքննության իրավունքի իմաստը: Նշված փաստաթղթում խորհուրդ է տրվել, որ կոնկրետ դատավորին հնարավորություն տրվի բողոքարկելու ՀՀ արդարադատության խորհրդի որոշումը, օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարան կամ որևէ այլ համապատասխան մարմին⁸:

ՀՀ արդարադատության խորհրդի որոշումների բողոքարկման վերաբերյալ մոտեցումը բխում է նաև ՄԱԿ-ի «Դատական մարմինների անկախության սկզբունքներ»-ի 20-րդ կետից, որի համաձայն՝ կարգապահական պատիժների, պաշտոնից ազատելու կամ հեռացնելու որոշումները պետք է դառնան անկախ ստուգման առարկա: Եվրոպայի խորհրդի «Դատավորի կարգավիճակի մասին» (10.06.1998 թ.) Եվրոպական խարտիայի 5.1 կետում ուղղակիորեն սահմանված է, որ դատավորի նկատմամբ տույժ նշանակած գործադիր մարմնի, կոլեգիայի կամ այլ մարմնի որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատական մարմին: «Դատական անկախության մասին» (25.05.2010 թ.) Կիևյան հանձնարարականների 5-րդ կետում նշվում է, որ կարգապահական որոշումները պետք է ենթակա լինեն իրավասու դատարանի կողմից վերաքննության կարգով վերահսկողության: Նույն դիրքորոշումը սահմանված է նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոնֆիտեի R (94) 12 հանձնարարականի 6-րդ սկզբունքի 3-րդ կետում, Եվրոպայի խորհրդի՝ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ առաջին և երրորդ եզրակացություններում, ինչպես նաև «Օրենքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողով»-ի (Վենետիկի հանձնաժողով) եզրակացությունում (CDL-AD/2007/009 ու. 408/2006): Այսպիսով, ՀՀ դատական օրենսգրքի՝ ՀՀ արդարադատության խորհրդի որոշումների բողոքարկումն արգելող դրույթը չի բխում դատավորի իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից:

Եթե առաջարկվում է թույլատրել ՀՀ արդարադատության խորհրդի որոշումների բողոքարկումը, ապա հարց է ծագում, թե որ մարմնին այն կարելի է բողոքարկել: Նշված հարցադրումը կարևոր է նաև դատական քաղաքականության սուբյեկտների փոխհարաբերակցության հնարավոր եզ-

⁸ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի նախագծի փորձաքննություն»: «CEELI Legal Assessment Series» 28.06.2006. Central European and Eurasian Law Initiative (CEELI) 740 15th St., N.W., Washington, D.C. P. 61:

րերը պարզելու համար: Հեղինակների մի մասը գտնում է, որ այն պետք է բողոքարկվի ՀՀ սահմանադրական դատարան⁹, իսկ երկրորդ խումբը՝ վարչական դատարան կամ ընդհանուր իրավասության դատարան (ՀՀ վճռաբեկ դատարան)¹⁰: Հարցին պատասխանելիս որպես սկզբունք պետք է ընդունել դատավորի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության պահանջը:

ՀՀ արդարադատության խորհրդի որոշումները ՀՀ վարչական կամ ընդհանուր իրավասության դատարան (ՀՀ վճռաբեկ դատարան) բողոքարկելը ինչքանով է իրական և արդյունավետ: Ինչպես հայտնի է, ՀՀ արդարադատության խորհրդի ինը անդամները դատավորներ են, ՀՀ արդարադատության խորհրդի նիստերը վարում է ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը, ՀՀ արդարադատության խորհրդի աշխատակազմի գործառույթներն իրականացնում է ՀՀ դատական ղեկարտամենտի առանձնացված ստորաբաժանումը, իսկ ղեկարտամենտի ղեկավարին ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը նշանակում և ետ է կանչում ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի ներկայացմամբ (ՀՀ դատական օրենսգրքի 72 հոդվածի 3-րդ մասի 17-րդ կետ): Եթե այս փաստերը դիտարկում ենք իրավական ռեալիզմի տեսանկյունից, ապա հասկանալի է, որ նման կազմով ՀՀ արդարադատության խորհրդի որոշումները վարչական դատարան կամ ընդհանուր իրավասության դատարան բողոքարկելը կունենա առավելապես պատրանքային բնույթ¹¹: Ամերիկյան իրավաբանների ընկերակցության «Դատական բարեփոխումների 2008 թ. ինդեքս» ծրագրի ուսումնասիրություններում փաստվում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը կարծես վճռական դեր է կատարում դատավորներին պատասխանատվության ենթարկելու հարցում, քանզի նա զգալի հսկողություն է իրականացնում դրա նկատմամբ¹²: Նման պայմաններում միայն տեսականորեն կարելի է պատկերացնել մի իրավիճակ, որ ՀՀ արդարադատության խորհրդի ինը դատավոր անդամները որոշեն դատավորի կողմից նյութական և դատավարական իրավունքի ակնհայտ և կոպիտ խախտման առկայությունը, իսկ վարչական կամ ընդհանուր իրավասության դատարանը, վերանայելով ՀՀ արդարադատության խորհրդի որոշումը, արտահայտի դրան հակառակ դիրքորոշում: Բողոքարկման նման մոդելի պարագայում իրատեսական կարող է համարվել միայն վարչական կամ ընդհանուր իրավասության դատարանների կողմից ՀՀ արդարադատության խորհրդի որոշումներն ընթացակարգային խախտումների հիմքով անվավեր ճանաչելու հնարավորությունը:

⁹ Տե՛ս **Ս. Ավետիսյան**, ՀՀ դատական համակարգի և քրեական դատավարության զարգացման հիմնախնդիրները, Եր., 2010, էջ 51:

¹⁰ Տե՛ս **Ս. Խաչատրյան, Գ. Խաչատրյան**, Դատավորի կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում (իրավահամեմատական վերլուծություն), Եր., 2002, էջ 43-44:

¹¹ Ի դեպ, «Հայաստանում դատաիրավական ոլորտի բարեփոխումների (2012-2014 թթ.) նախագծումը» ծրագրի փորձագետների վերլուծության նախնական տարբերակում նույնպես նշված էր, որ թեև ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը չի մասնակցում ՀՀ արդարադատության խորհրդի աշխատանքին, սակայն ՀՀ վճռաբեկ դատարանը նշանակալի ազդեցություն ունի ՀՀ արդարադատության խորհրդի վրա: «Արդարադատության բարեփոխումների միջոցառումների ռազմավարական ծրագրում» այս միտքը բացակայում է:

¹² Տե՛ս «Դատական բարեփոխումների ինդեքս Հայաստանի Հանրապետության համար», հ. 3, 2008, էջ 90:

Դատավորի իրավունքների դատական պաշտպանությունը ՀՀ սահմանադրական դատարանին վերապահելու օգտին են վկայում հետևյալ փաստարկները՝ 1. դատավորի կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը ուղղակի թե անուղղակի սահմանափակում է ՀՀ Սահմանադրության 94 հոդվածի 1-ին մասում ամրագրված դատարանի անկախության սկզբունքը: Դատավորը, վիճարկելով կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ՀՀ արդարադատության խորհրդի որոշումը կամ ՀՀ Նախագահի հրամանագիրը, ըստ էության, բարձրացնում է սահմանադրական արդարադատության տիրույթում գտնվող հարցադրում: ՀՀ սահմանադրական դատարանը պետք է գնահատի դատավորին վերագրվող խախտման իրավական բազայի որոշակիությունը, իրավախախտման և կիրառված կարգապահական պատասխանատվության միջոցի համաչափությունը և համատեղելիությունը դատավորի անկախության սահմանադրական արժեքի հետ: 2. ՀՀ սահմանադրական դատարանը որևէ մասնակցություն չունի կարգապահական վարույթ հարուցելու, կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացում և փաստացի տարանջատված է կարգապահական պատասխանատվություն հարաբերությունների ինստիտուցիոնալ համակարգից: 3. ՀՀ սահմանադրական դատարանի ձևավորման եղանակն առավելագույնս է երաշխավորում այդ մարմնի անկախությունը, և այդ առումով ՀՀ սահմանադրական դատարանը միակ մարմինն է, որը իր սահմանադրաիրավական կարգավիճակով ունակ է ոչ պատրանքային ձևով լուծելու ՀՀ Նախագահի՝ դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին հրամանագրի սահմանադրականությունը:

ՀՀ դատական օրենսգրքի 158 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս ՀՀ արդարադատության խորհրդը գործում է որպես դատարան: ՀՀ արդարադատության խորհրդը որպես դատարան որակելու օրենսդրի մոտեցումը իրավագիտության մեջ միանշանակ չի ընկալվում: Ա. Պողոսյանը նշում է, որ ՀՀ Սահմանադրության 91 և 95 հոդվածների ուժով ՀՀ արդարադատության խորհուրդը չի կարող իրականացնել արդարադատություն: ՀՀ արդարադատության խորհուրդը կարող է հանդես գալ բացառապես վարչական մարմնի կարգավիճակում¹³: Վ. Հովհաննիսյանն այս կապակցությամբ նշում է, որ «դատարան» հասկացությանը պետք է մոտենալ շատ նրբանկատ և ուշադիր. չի կարելի այդ կերպ անվանել ցանկացած մարմին, կամ այդ հասկացության օգտագործման միջոցով փորձել ընդգծել թեկուզ կարևոր նշանակություն ունեցող որևէ պետական մարմնի հատուկ կարգավիճակը, ինչպես արել են ՀՀ դատական օրենսգրքի հեղինակները՝ ՀՀ արդարադատության խորհրդի կապակցությամբ¹⁴: Կարծում

¹³ Տե՛ս Ա. Պողոսյան, ՀՀ դատական համակարգի գործունեության հետագա բարելավման վերաբերյալ հայեցակարգային մի շարք մոտեցումներ: ՀՀ դատական համակարգի գործունեության հետագա բարելավման գրավականներ, «Օրենք և իրականություն», թիվ 1 (171), 2010, էջ 12-16:

¹⁴ Տե՛ս Վ. Հովհաննիսյան, Քրեական արդարադատության սկզբունքները միջազգային իրավունքում. էվոլյուցիան և իմպլեմենտացիայի առանձնահատկությունները, Եր., 2011, էջ 162-163:

ենք՝ քննարկվող իրավիճակում «դատարան» հասկացությունը չպետք է մեկնաբանել սահմանադրական իմաստով, և ՀՀ արդարադատության խորհուրդը չպետք է հասկանալ դասական իմաստով դատարան, իսկ նրա գործունեությունը՝ արդարադատություն: Օրինակ՝ Եվրոպական դատարանը մի շարք գործերով բացահայտել է Կոնվենցիայի իմաստով «դատարան» հասկացության նշանակությունը. «դատարանը», բացի նյութաիրավական իմաստով արդարադատություն իրականացնելու դերակատարությունից, պետք է օժտված լինի հետևյալ հատկանիշներով՝ անկախություն գործադիր իշխանությունից, անաչառություն, անդամների մանդատների տևականություն, դատավարական երաշխիքների տրամադրում: Եվրոպական դատարանը նաև նշել է, որ Կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին մասի իմաստով դատարանը պարտադիր չէ, որ հանդիսանա «դատարան» դասական իմաստով և ընդգրկված լինի դատական համակարգում (Rolf Gustafson, 45)¹⁵: Կարծում ենք՝ ՀՀ արդարադատության խորհուրդը բավարարում է Կոնվենցիայում ամրագրված «դատարանին» ներկայացվող պահանջները (անկախություն գործադիր իշխանությունից, դատավարական երաշխիքներ և այլն): Ուստի ՀՀ արդարադատության խորհուրդը կարգապահական պատասխանատվության հարցերով որպես դատարան դիտելը չի կարելի որակել հակասահմանադրական կամ ոչ նրբանկատ մոտեցման արդյունք: Ինչպես նշեցինք, ՀՀ արդարադատության խորհուրդը սահմանադրական տեսանկյունից դասական իմաստով դատարան չէ, սակայն օրենսդիրը, այն դատարան որակելով, կիրառել է իրավական տեխնիկայի այնպիսի կանոն, ինչպիսին է իրավական ֆիկցիան, որով լուծվել են հետևյալ խնդիրները.

1. դատավորի կարգապահական պատասխանատվության վարույթի նկատմամբ դատավարական երաշխիքների կիրառում,

2. ոչ դատական մարմնի կողմից դատավորի՝ դատավարական կամ նյութական նորմերի խախտումների հաստատման անթույլատրելիության խնդրի լուծում,

3. ՀՀ արդարադատության խորհրդի որոշումների վիճարկումը որպես դատական ակտի վերանայման գործընթացի դիտարկում:

Որպես դատարան գործելիս ՀՀ արդարադատության խորհրդում գործերի քննության կարգի նկատմամբ կիրառվում են ՀՀ վարչական դատավարական օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությանը կիրառելի են ՀՀ արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ և չեն հակասում դատական օրենսգրքի նորմերին: ՀՀ դատական օրենսգրքի 160 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ՀՀ արդարադատության խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը քննելիս դատավորն օգտվում է ՀՀ Սահմանադրության 19 հոդվածով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետով նախատեսված երաշխիքներից: Այս նորմերից բխում է, որ կարգապահական պատասխանատվության ենթարկելու

¹⁵ Տե՛ս **Микеле де Сальвиа**. Прецеденты Европейского Суда по правам человека. М., 2004, т. 2 1072:

հարցը քննելիս ՀՀ արդարադատության խորհուրդը գործում է որպես դատարան, իսկ այդ վարույթի ընթացքում կիրառվում են Սահմանադրության 19 հոդվածի և Կոնվենցիայի 6 հոդվածում սահմանված արդար դատական քննության երաշխիքները¹⁶:

Հայտնի է, որ վարչական մարմինը (ոչ դատական մարմինը) չի կարող հաստատել դատավորի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի խախտման փաստը և դատավորի նկատմամբ կիրառել իրավաբանական պատասխանատվության միջոցներ: Եթե ՀՀ արդարադատության խորհուրդը գործում է ոչ թե որպես դատարան, այլ վարչական մարմին, ապա իրավամբ հարց է ծագում՝ ոչ դատական մարմինը ինչպե՞ս կարող է գնահատել դատարանի դատավարական գործողությունները և դրա հիման վրա կիրառել պատասխանատվության միջոց: Ուստի, ՀՀ արդարադատության խորհուրդը որպես դատարան դիտարկելը իրավական ֆիկցիայի շրջանակներում լուծում է ոչ դատական մարմնի կողմից դատարանի՝ դատավարական գործողությունների գնահատման անթույլատրելիության հետ կապված խնդիրը:

ՀՀ արդարադատության խորհուրդը՝ որպես դատարան, քննում է դատավորի կարգապահական պատասխանատվության հարցը: Եթե ՀՀ արդարադատության խորհուրդը դատավորին ենթարկում է կարգապահական պատասխանատվության, ապա դատավորը պետք է ունենա իր վերաբերյալ կայացված դատական ակտը վերանայելու հնարավորություն: Այս առումով ՀՀ արդարադատության խորհրդի՝ որպես դատարանի կայացրած ակտը ՀՀ սահմանադրական դատարան բողոքարկելիս դատավորը իրացնում է իր վերաբերյալ կայացված դատական ակտի վերանայման հնարավորությունը:

ՀՀ արդարադատության խորհրդի և ՀՀ վճռաբեկ դատարանի ակտերի փոխազդեցությունը: ՀՀ արդարադատության խորհրդի և ՀՀ վճռաբեկ դատարանի ակտերի փոխազդեցության հարցերը պետք է քննարկել երկու հարթությունում՝

1. նյութական և դատավարական իրավունքի կոպիտ և ակնհայտ խախտման վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման ազդեցությունը դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և ՀՀ արդարադատության խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացի վրա,

2. նյութական և դատավարական իրավունքի կոպիտ և ակնհայտ խախտման վերաբերյալ ՀՀ արդարադատության խորհրդի որոշման ազդեցությունը ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտը վերանայելու նկատմամբ:

¹⁶ Միննույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով կիրառելի չեն դատավարական որոշ երաշխիքներ: Օրինակ՝ եթե դատավարության ընթացքում գործում է դատավորի ինքնաբացարկի ինստիտուտը, ապա այն կիրառելի չէ ՀՀ արդարադատության խորհրդի անդամների նկատմամբ: Ստացվում է, որ կարգապահական պատասխանատվության ենթարկվող դատավորը չի կարող ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնել ՀՀ արդարադատության խորհրդի այն անդամին, ով, օրինակ, կարգապահական վարույթ հարուցելու մասին հաղորդում ներկայացրած ֆիզիկական անձի ազգականն է: Նման հնարավորության բացակայությունը զրկում է դատավորին ոչ անաչառ անդամի դեմ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի հնարավորությունից:

ՀՀ դատական օրենսգրքի 153 հոդվածի 3-րդ մասում նախատեսվում է, որ դատավորի որոշման բեկանումը կամ փոփոխումն ինքնին նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք չէ: Մյուս կողմից, ՀՀ դատական օրենսգրքի 155 հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ կարգապահական վարույթ հարուցելու առիթ է վճռաբեկ դատարանի որոշումը, որով հաստատվել է, որ արդարադատություն իրականացնելիս գործը կամ հարցն ըստ էության լուծելիս կայացվել է ակնհայտ ապօրինի դատական ակտ, կամ արդարադատություն իրականացնելիս դատավորը թույլ է տվել դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտում: Ինչպես նկատում ենք, «օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումը» հանդիսանում է կարգապահական վարույթ հարուցելու առիթ, միևնույն ժամանակ՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք: Եթե ՀՀ վճռաբեկ դատարանը իր որոշումներում հստակ հաստատում է օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտման առկայությունը, ապա այն փաստացի հանդիսանում է դատավորի նկատմամբ կարգապահական պատասխանատվություն կիրառելու հիմք: Ասվածը հիմնավորվում է նաև ՀՀ արդարադատության խորհրդի աշխատակազմի տրամադրած տեղեկատվությամբ, որ 2008-2011 թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ դատական օրենսգրքի 155 հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով ՀՀ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքով հարուցվել է 3 կարգապահական վարույթ, որոնցով ՀՀ արդարադատության խորհուրդը կայացրել է դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումներ:

Արտասահմանյան փորձագետները նշում են, որ բեկանման մասին որոշումներում ՀՀ վճռաբեկ դատարանը հաճախ ավելի ցածր ատյանի դատարանի դատավորի դատական սխալը որակում է որպես «կոպիտ» սխալ, որից հետո ՀՀ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը դատավորի նկատմամբ հարուցում է կարգապահական վարույթ, և գործը քննվում է խորհրդի կողմից: Ուստի խորհուրդը, հիմնվելով բացառապես վճռաբեկ դատարանի գնահատականի վրա, միշտ մեղավոր է ճանաչում դատավորին՝ առանց լուրջ պատճառաբանության¹⁷:

ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ արդարադատության խորհրդի իրավասության սահմանների հստակեցման տեսանկյունից, կարծում ենք, որ պետք է օրենսդրությամբ բացառել ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից խախտումներին տրվող այնպիսի իրավական գնահատականը, որն ինքնին դատավորի կարգապահական պատասխանատվության հիմք է: Նյութական և դատավարական իրավունքի «ակնհայտ և կոպիտ խախտում» հասկացությունը նախատեսված է միայն ՀՀ դատական օրենսգրքով, այն դատավարական եզրույթ չէ: Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 406 հոդվածի 2-րդ մասում, 397, 398 հոդվածներում սահմանվում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտը բեկանելու հիմք է ոչ թե օրենքի ակնհայտ և կոպիտ խախտումը, այլ նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառումը կամ դատավարական իրավունքի էական խախտումները:

¹⁷ Տե՛ս «Հայաստանում դատաիրավական ոլորտի բարեփոխումների (2012-2014 թթ.) նախագծումը» ծրագրի փորձագետների վերլուծություն:

Հայտնի է, որ ՀՀ արդարադատության խորհուրդը նյութական կամ դատավարական օրենքի ակնհայտ և կոպիտ խախտում թույլ տալու հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկել անկախ այն բանից, թե դատական ակտը ՀՀ վերաքննիչ կամ վճռաբեկ դատարան բողոքարկվե՞լ է, թե՞ ոչ: Նման կարգավորումը ստեղծել է մի իրավիճակ, որ ՀՀ արդարադատության խորհուրդը փաստում է կոնկրետ գործով դատավորի կողմից թույլ տրված նյութական կամ դատավարական օրենքի ակնհայտ և կոպիտ խախտում, սակայն այդ խախտումների հիման վրա կայացված դատական ակտը, որը չի բողոքարկվել ՀՀ վերաքննիչ կամ վճռաբեկ դատարան, մնում է օրինական ուժի մեջ: Ստացվում է, որ ՀՀ արդարադատության խորհրդի որոշումը կասկածի տակ է դնում դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը, սակայն այդ դատական ակտը շարունակում է մնալ օրինական ուժի մեջ: Նշված խնդիրը լուծելու համար առաջարկում ենք հետևյալ տարբերակները.

1. Դատավորին կարգապահական պատասխանատվության կարելի է ենթարկել, եթե դատական վերադաս ատյանի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ նյութական կամ դատավարական օրենքի էական խախտման հիմքով բեկանվել կամ փոփոխվել է տվյալ դատավորի կողմից կամ նրա մասնակցությամբ կայացված դատական ակտը¹⁸: Կարծում ենք՝ անընդունելի է դատավորի կարգապահական պատասխանատվության հարցի քննարկումը կախվածության մեջ դնել բարձր դատարանի կողմից այդ ակտը բեկանելու կամ փոփոխելու հանգամանքից, քանի որ հնարավոր է այնպիսի իրավիճակ, որ դատավարության մասնակիցները չբողոքարկեն նշված դատական ակտը, մինչդեռ դատական իշխանության մարմինների գործունեության հանրային բնույթը և իրավունքի ակնհայտ ու կոպիտ խախտում թույլ տված դատավորի կարգապահական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը պահանջում են դատավորի նկատմամբ կիրառել իրավական ներգործության միջոցներ:

2. Որոշակի վերապահումով, ընդունելի է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ՀՀ արդարադատության խորհրդի որոշումը՝ որպես դատական ակտը վերանայելու նոր հանգամանք դիտելու վերաբերյալ առաջարկը¹⁹: Այս հիմքը, ի լրումն այլ հիմքերի, հնարավորություն է տալիս ուղղելու դատական սխալները, վերականգնելու անձանց խախտված իրավունքները ու օրինական շահերը և բարձրացնելու նաև ՀՀ արդարադատության խորհրդի դերը դատական իշխանության մարմինների համակարգում: Միևնույն ժամանակ կարծում ենք, որ ՀՀ արդարադատության խորհրդի որոշումների՝ ՀՀ սահմանադրական դատարան բողոքարկելու սահմանադրական կարգավորման պարագայում որպես բուն գործով կայացված դատական ակտի վերանայման հիմք կարող է հանդիսանալ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը:

¹⁸ Տե՛ս **Մ. Խաչատրյան, Դ. Խաչատուրյան**, նշվ. աշխ., էջ 54:

¹⁹ Տե՛ս **Ս. Մարաբյան**, Դատական ակտերի վերանայման հնարավորությունը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ՀՀ արդարադատության խորհրդի որոշման հիման վրա, «Դատական իշխանություն», մարտ, 2011, էջ 29:

ՀՀ արդարադատության խորհրդի որոշումը ինքնին կարող է օրենսդրությանը դիմել որպես դատական ակտը վերանայելու նոր հանգամանք, եթե այն օրենքով սահմանված ժամկետում չի բողոքարկվել ՀՀ սահմանադրական դատարան:

Այսպիսով, կարելի է փաստել, որ հասարակական - քաղաքական համակարգում ՀՀ արդարադատության խորհուրդն առավելապես ընկալվում է որպես դատավորին «պատժող» մարմին, ինչը սահմանափակում է այս մարմնի դերակատարությունը իրավական կյանքում: ՀՀ արդարադատության խորհրդի որոշումները չունեն բավարար հեղինակություն, չեն օգտագործվում իրավաստեղծ և իրավակիրառ ոլորտում: Կարծում ենք՝ ՀՀ արդարադատության խորհրդը ապահովում է (պետք է ապահովի) դատավորի անկախությունը և պատասխանատվության անխուսափելիությունը և այդ նպատակով կոչված է ապահովելու դատավորների կարգապահական պատասխանատվության հիմքերի միասնական ընկալումը: Նման կարգավիճակի ամրագրման պայմաններում ՀՀ արդարադատության խորհուրդը կարող է ուղղորդել նաև այլ դատարանների գործունեությունը, օրենսդիր իշխանության առջև բարձրացնել դատավորի դատավարական և ոչ դատավարական գործունեությունը կարգավորող օրենսդրության կատարելագործման և իրավական որոշակիության հաստակեցման հարցեր: Իրավաբան գիտնականների ներկայությունը ՀՀ արդարադատության խորհրդի կազմում չի ապահովում խորհրդի քաղաքականությունն արտահայտող ակտերի դոկտրինալ բնույթը, ինչը պայմանավորված է իրավաբան գիտնականների կողմից խորհրդի որոշումների նախագծերի պատրաստման մասնակցության և հատուկ կարծիք ներկայացնելու կառուցակարգերի բացակայությամբ:

Վերը նշվածի հիման վրա առաջարկում ենք հետագա սահմանադրական բարեփոխումների շրջանակներում նախատեսել ՀՀ արդարադատության խորհրդի որոշումները ՀՀ սահմանադրական դատարան բողոքարկելու հնարավորություն: ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ արդարադատության խորհրդի իրավասության սահմանների հստակեցման տեսանկյունից առաջարկում ենք ամրագրել, որ ՀՀ վճռաբեկ դատարանը դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքում դնում է նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառման կամ դատավարական իրավունքի էական խախտման փաստը, իսկ ՀՀ արդարադատության խորհուրդը որոշում է այդ խախտումների «ակնհայտ և կոպիտ» լինելը կամ չլինելը:

АРТУР ГАМБАРЯН – О деятельности Совета правосудия РА. – В обществе Совет правосудия РА воспринимается по преимуществу как орган, который наказывает судью. Такое понимание функций Совета ограничивает его роль в правовой жизни. Социологические опросы свидетельствуют, что решения Совета правосудия недостаточно авторитетны и практически не влияют на правотворческую и правоприменительную деятельность.

Между тем Совет правосудия должен обеспечивать как независимость судьи, так и его неизбежную и единообразно воспринимаемую дисциплинарную ответственность за допущенные ошибки. В случае, если Совету правосудия будут

приданы эти права, он сможет направлять работу судов, добиваться, чтобы законодательная власть совершенствовала законодательство и правовую определенность, и регулировать подобным образом процессуальную и непроцессуальную деятельность судей.

В состав Совета правосудия входят учёные-юристы, но само по себе это не гарантирует доктринальную сущность его актов. Дело в том, что учёные не участвуют в подготовке проектов решений Совета, а кроме того, отсутствуют механизмы, позволяющие им выразить своё особое мнение. В рамках дальнейших конституционных реформ следует предусмотреть возможность обжаловать решения Совета правосудия РА в Конституционном суде.

Чтобы прояснить границы компетенции Кассационного суда РА и Совета правосудия РА, в статье предлагается зафиксировать, что Кассационный суд аннулирует или изменяет судебный акт, если неправильно применён материальный закон или существенно нарушено процессуальное право, тогда как Совет правосудия решает, насколько очевидно и грубо данное нарушение.

ARTUR GHAMBARYAN – *Some Issues with Regard to the Activities of the Council of Justice of RA.* – The activities of the Council of Justice of the Republic of Armenia are discussed in the article. The author notes that in socio-political system of the RA the Council of Justice is mainly perceived as an authority "punishing" the judges, and this perception limits the alleged role of Council in legal life. Based on social surveys' results summation the author concludes that RA Council of Justice Decisions has no sufficient authority, isn't used in lawmaking and enforcement.

The author considers that RA Council of Justice ensures (has to ensure) both the independence of the judge and the inevitability of responsibility, and for this reason is intended to define common perception of disciplinary responsibility of judges. When have fixed such a status, the Council of Justice of the Republic of Armenia may direct the activities of other courts and bring up the definitive questions before the legislature on legislation and legal certainty improvement in regard to the regulation of procedural and nonprocedural activities of judges.

Due to the lack of mechanisms of participation of legal scholars in creation of RA Council of Justice Draft Decisions as well as reporting dissenting opinion by the latter ones, the presence of legal scholars in the mentioned body by itself does not provide the doctrinal essence of the policy acts of the Council. Within the frameworks of further constitutional reforms the author proposes to stipulate the possibility of appealing RA Council of Justice Decisions to the Constitutional Court of RA.

In order to clarify the RA Court of Appeal and RA Council of Justice competence boundaries, the author suggests the definition that the basis for revocation or modification of the judicial act by RA Court of Appeal is the fact of misuse of material law or significant violation of procedural law, while the Council of Justice decides the question of their "obviousness and rudeness".